ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՐՏԻ ԻՇԵՄԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՀԻՎԱՆԴԱՑՈՒԹՅԱՆ, ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ

Սաիյան Հ. Ե.

«Էրեբունի» գիտաբժշկական կենտրոն, Երևան, Հայաստան

Սրտի իշեմիկ հիվանդությունից (ՍԻՀ) յուրաքանչյուր տարի աշխարհում մահանում են 7 միլիոնից ավելի մարդ (մահացածների ընդհանուր թվի 12,2%): Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության կանխատեսմամբ, 2030 թվականին շուրջ 23,6 միլիոն մարդ կմահանան սիրտ-անոթային հիվանդությունների՝ գլխավորապես սրտի իշեմիկ հիվանդության և ինսուլտի պատճառով: Վերջին տարիներին սրտի իշեմիկ հիվանդության տարածվածությունը ԱՄՆ-ում կազմում է 13,5 միլիոն մարդ, որը հանդիսանում է բոլոր մահվան դեպքերի ավելին քան 1/5 մասը: Եվրոպական երկրներում 1 000 000 բնակչությունից սրտի իշեմիկ հիվանդությունով տառապում են շուրջ 30000 մարդ: Նախկին խորհրդային հանրապետությունների տարածքում սրտի իշեմիկ հիվանդությունից մահացությունների առավել մեծ ցուցանիշներ նշվում են հետևյալ երկրներում. Թուրքմենիա՝583,7, Ուզբեկստան՝ 465,0, Ադրբեջան՝ 435,9, Ղազախստան՝ 419,2, Էստոնիա՝ 408,7 մարդ (համապատասխանաբար 1 000 000 բնակչության):

ՀՀ ԱՆ Ազգային առողջապահության ինստիտուտի տեղեկատվական վերլուծողական կենտրոնի պաշտոնական տվյալների համաձայն, վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում նույնպես դիտարկվում է սրտի իշեմիկ հիվանդության աճ: Այսպես. 2004 թ-ից առ 2010 թ., սրտի իշեմիկ հիվանդության հիվանդացության ցուցանիշները, 100 000 բնակչության համար, համապատասխանաբար աճել են 330,5-ից մինչ 559,1 (1,8 անգամ), իսկ տարածվածության ցուցանիշները՝ 1414,5 մինչ 2091,6 (1,6 անգամ): Ընդ որում, սրտի իշեմիկ հիվանդությունից մահացության ցուցանիշները մի փոքր նվազել են 265,4-ից մինչև 252,2 մարդ (համապատասխանաբար 100 000 բնակչության):

Պաշտոնական վիճակագրության ցուցանիշների համառոտ ակնարկը հերթական անգամ հաստատում է հայրենական առողջապահության համար դիտարկվող հիմնախնդրի արդիականությունը և թելադրում է Հայաստանում սրտի իշեմիկ հիվանդության հիվանդացության, տարածվածության և մահացության մանրակրկիտ վերլուծության անհրաժեշտությունը՝ սրտի իշեմիկ հիվանդությունով հիվանդների Ազգային գրացուցակի և հիվանդների վարման Ազգային արձանագրությունների ստեղծման նպատակով: